ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2022, № 1, 52-58 *Հոգեբանություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2022.13.1.052

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

ՎԱՐԴՈՒՀԻ ՊԱՊՈՅԱՆ, ԱԼԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ, ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ-ում կրթական ծրագրերով ամրագրված մասնագիտությունների համար նախատեսված մասնագիտական կարողունակությունները (կոմպետենցիաներ) այսօր վերաձևավորման և համալրման անհրաժեշտություն ունեն: Դա պայմանավորված է վերջին տարիներին ի հայտ եկած մի շարք ճգնաժամային գործոններով՝ COVID-19-ին առնչվող սահմանափակումներ, 44-օրյա պատերազմի հոգեբանասոցիալական հետևանքներ, կրթության գործընթացի տեխնոլոգիական նոր պահանջներ և այլ: Հոդվածում առաջարկում ենք մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների եռամակարդակ մոդել, որի նպատակն է նորովի համակարգել մասնագետի կայացման ուղին՝ անձնային աճից մինչև պրոֆեսիոնալիզմ: Մոդելը ներառում է վերին, միջին և ստորին մակարդակներ, որտեղ վերինը գիտահետազոտական, կազմակերպչական, ուսուցողական և տեխնոլոգիական կարողություններն են, միջինը՝ մասնագետի ակտիվությունը, հակվածությունը գործին, արտաքին և ներքին դրդապատճառները, իսկ ստորինը՝ մասնագետի անձի հուզական, վարքային և կամային որակները: Մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների նախնական ուսումնասիրություն իրականացրել ենք մեր երկրում վերջին տարիներին մեծ պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների համար (մասնավորապես՝ բժիշկներ, հոգեբաններ, մանկավարժներ, ռազմագետներ):

Բանալի բառեր - *ճգնաժամ, մասնագիտական կարողունակություն, անձ, հմտություն, եռամակարդակ մոդել, հոգեբանասոցիալական որակներ*

Խնդրի վերլուծություն

Մասնագիտական կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը սկսվում են կրթության ընթացքում գիտելիքների յուրացմամբ, որոշակի կարողություններ և հմտություններ ձեռք բերելով, իսկ արդեն աշխատանքային գործունեության մեջ այն համալրվում է նոր հմտություններով և փորձառություններով, որոնք դուրս են մնացել կրթակարգերից և գիտակարգերից[1]: ՀՀ-ում ստեղծված ճգնաժամային

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5A044 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[1] Տե ս **Савельева С. С.** Профессиональная компетентность учителя XXI века: учебное пособие / С. С. Савельева. – Коломна: Коломенский государственный педагогический институт, 2008. 88 էջ:

բարդ պայմաններում առավել քան արդիական ենք համարում մասնագիտական կարողունակությունների, հատկապես հոգեբանասոցիալական հատկանիշների վերաձևավորման և զարգացման գնահատումն ու հետազոտումը: Հաշվի առնելով կրթական ուսումնական ծրագրերի և մասնագիտական կարողունակությունների ոչ բավարար համապատասխանությունը և որոշ դեպքերում նույնիսկ հակասությունը՝ անհրաժեշտ ենք համարում վերանայել մասնագիտական կարողունակությունների հոգեբանասոցիալական բաղադրիչները, որոնք դառնում են առաջնահերթ ըստ թելադրվող գերակայությունների՝ հոգեկան առողջության ապահովում՝ պայմանավորված COVID 19-ով, հայրենասիրական գաղափարախոսության շեշտադրում՝ հետպատերազմյան հետևանքների հաղթահարման նպատակով, և նորարարական տեխնոլոգիաների տիրապետում՝ առցանց ուսուցման արդյունավետության բարձրացման համար:

Բազմաթիվ են աշխարհում հոգեբանական և առողջապահական հետազոտությունները, որոնք փորձում են դիտարկել COVID-19-ի սահմանափակումների հետևանքով ի հայտ եկող հոգեկան առողջության փոփոխությունները[2]: Ակնհայտ է, որ համավարակը ճգնաժամային վիճակ ստեղծեց բազմաթիվ մասնագիտությունների համար՝ առաջադրելով մասնագիտական կարողունակությունների նոր մարտահրավերներ և մասնագիտական այրման վտանգներ: Մեր երկրում մասնագիտական ճգնաժամն առավել խորացավ 44-օրյա պատերազմի հետևանքով, որը անդրադարձավ հատկապես բժիշկների, ռազմագետների, հոգեբանների, մանկավարժների, քաղաքագետների, փրկարարների և այլ մասնագետների վրա[3]:

Նպատակ և խնդիրներ

Մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների եռամակարդակ մոդելի նախագծումն ունի մի քանի թիրախային նպատակակետեր: Դրանցից է կարողունակությունների բարեփոխման գաղափարն առանձին մասնագիտությունների համար հատկապես ՀՀ-ում ստեղծված ճգնաժամային պայմաններում: Մյուսը բարձրագույն ուսումնական ծրագրերի ռազմավարության մեջ նորարարական մո-

---

[2] Տե՛ս **Sheila Menon FBSCH, Vidya Bhagat**. Review of the Impact Covid-19 has on the Psychosocial Factors Affecting Well-Being. Research Journal of Pharmacy and Technology. 2021; 14(6):3404-8. doi: 10.52711/0974-360X.2021.00592 Available on: https://rjptonline.org/Abstract View.aspx?PID=2021-14-6-82: **Cuartero-Castañer, M.E.; Hidalgo-Andrade, P.; Cañas-Lerma, A. J**. (2021) Professional Quality of Life, Engagement, and Self-Care in Healthcare Professionals in Ecuador during the COVID-19 Pandemic. *Healthcare* 2021, *9*, 515. https://doi.org/ 10.3390/healthcare9050515

[3] Տե՛ս **Ն. Խաչատրյան, Ա. Գրիգորյան, Ա. Հակոբջանյան, Ս. Մանուսյան,** Կյանքով բավարարվածությանը նպաստող գործոնների նշանակությունը Քովիդ-19 համավարակի պայմաններում. «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», 2021, №3, էջ 63–74. https://doi.org/10.46991/BYSU:E/2021.12.3.063

տեցումների մշակումն է՝ հեռահար նպատակ հետապնդելով դեպի ապագա մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների նախագծումը դեռևս գործող և նոր մասնագիտությունների համար:

Մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների եռամակարդակ մոդելի նախագծումը ենթադրում է մի շարք խնդիրների առաջադրում և լուծում.

- եռամակարդակ մոդելի մեթոդաբանական կառուցվածքի ընդգծում և հիմնավորում,
- միջազգային փորձի համակարգում, որն ուղղված է տարբեր բնագավառներում մասնագիտական կարողունակությունների ուսումնասիրմանը՝ հաշվի առնելով դրանց առաջնահերթությունը ներկա ճգնաժամային պայմաններում,
- մասնագետներին ներկայացվող արդի պահանջների ***գնահատում և հետազոտում***՝ հարմարացնելով դրանք կարողունակությունների՝ մեր առաջարկած եռաստիճան մոդելին:

Մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների եռամակարդակ մոդելի նկարագրություն

Մասնագիտական կարողունակությունների վերաբերյալ ուսումնասիրություններն ընթանում են մի քանի ուղղությամբ: Համակարգային մոտեցումը ներառում է հիմնականում ռուս հոգեբանության դպրոցը, ընդգծում է մասնագետի ֆիզիոլոգիական, հոգեկան և անձնային առաջատար կարողունակություններն ըստ գործունեության բնույթի[4]: Ռուս հոգեբանների վերջին տարիների ուսումնասիրությունները[5] ցույց են տալիս, որ նրանք, պահպանելով իրենց ավանդական մոտեցումները, կարևորում են կոնկրետ գործունեության կամ մասնագիտության տեսակը, այդ տեսակի համար անհրաժեշտ որակները (գիտելիքները, կարողությունները և հմտությունները): Բազմաթիվ հեղինակներ այս մոտեցմամբ մոդելավորում են առաձին մասնագիտությունների համար պրոֆեսիոգրամաններ[6]:

Անձնային հոգեբանական մոտեցումները, որոնք հիմնականում բնորոշ են եվրոպական և ամերիկյան դպրոցներին[7], առանձնացնում են ընդհանուր կարողունակություններ, որոնք առաջնային են մասնա-

---

[4] Տե՛ս **Зеер Э.Ф., Павлова А.М., Сыманюк Э.Э.** Модернизация профессионального образования: компетентностный подход: учеб. пос. М.: Московский социально-психологический институт, 2005, 136 էջ:

[5] Տե՛ս **Булаевская О. А.** Сущностные характеристики профессиональной компетентности, Школьные технологии. 2005, № 3, էջ 40-44:

[6] Տե՛ս **Введенский В.Н.** Моделирование профессиональной компетентности педагога // Педагогика. № 10, 2003, էջ 51-55:

[7] Տե՛ս **Равен Дж**. Компетентность в современном обществе. Выявление, развитие и реализация. М., 2002, էջ 151-154:

գիտական գործունեության գրեթե բոլոր տեսակների համար (հաղորդակցման հմտություններ, թիմային աշխատանք, նախաձեռնողականություն և այլն)[8]:

Մասնագիտական կարողունակությունների մոդելավորման այս երկու հիմնարար մոտեցումները թերևս մասնագիտական կրթության և պատրաստման գործընթացում համակարգված են և կարողանում են անձի մեջ ձևավորել համապատասխան հմտություններ և գիտելիքներ:

Ընդհանուր առմամբ՝ վերլուծելով տարբեր մոտեցումներ, եզրակացնում ենք, որ մասնագիտական կարողունակությունները այն հիմնարար որակներն են, որոնցով կառուցվում են մասնագետի կերպարը, նրա հետագա զարգացման և ինքնակատարելագործման ու ինքնիրացման հնարավորությունները[9]: Այս սահմանման մեջ առանձնակի շեշտադրվում է կարողունակությունների ինքնակատարելագործման գործառույթը: Այն ենթադրում է, որ տվյալ կարողունակությանը տիրապետող մասնագետը ունի ինքնազարգացման և ինքնադրսևորման հնարավորություններ[10]: Սակայն COVID-19-ի պատճառով մասնագիտական գործունեության որոշ տեսակների համար առաջացավ հոգեբանական բարդ ճգնաժամ: Է՛լ ավելի մեծ խնդիրներ առաջացրին պատերազմի ընթացքն ու հետևանքները առանձին մասնագիտությունների կարողունակությունների բանաձևի առումով:

Ելնելով սույն նպատակից՝ անհրաժեշտ ենք համարում վերանայել և հետազոտական ճանապարհով բացահայտել մասնագիտությունների համար մինչ այժմ ամրագրված կարողունակությունները կոմպետենցիաները, համալրել դրանք հոգեբանական, սոցիալական այն նոր որակներով ու հմտություններով, որոնք նշանակալի կլինեն ճգնաժամային պայմաններում փոխակերպված գործառույթների սահմանափակումները լրացնելու և առաջացած խնդիրները արդյունավետ լուծելու համար:

Արդի ճգնաժամային պայմաններում փորձ է արվում հստակեցնելու մասնագիտական կարողունակությունների բովանդակությունն ըստ իրականացման կարևորության՝ եռաստիճան մակարդակում.

- վերին (ընդհանուր կամ ընդհանրացված)՝ վերաբերում է կառավարչական այն մարմինների ներկայացուցիչներին, որոնք լուծելու են ռազմավարական գլոբալ խնդիրներ,

- միջին՝ վերաբերում է այն կառույցների/ենթակառույցների ներկայացուցիչներին, որոնք պատասխանատվություն են կրելու վերը

---

[8] Տե՛ս Baczyńska AK, Rowiński T. and Cybis N. (2016) Proposed Core Competencies and Empirical Validation Procedure in Competency Modeling: Confirmation and Classification. Front. Psychol. 7:273. doi: 10.3389/fpsyg.2016.00273

[9] Տե՛ս **Папоян В. Р.** Профессиональная компетентность как фактор самореализации личности профессионала. Пятая годичная научная конференция. Сборник науч. ст. Изд-во РАУ, Ер.: 2011, էջ 385-391:

[10] Տե՛ս «Մասնագետի՝ պատրաստման հոգեբանական գնահատում: Թեստեր և վարժանքներ» / կազմողներ՝ Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յու. Սարգսյան, Մ. Ա. Կարապետյան, Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 26-30:

նշված խնդիրների իրագործման համար,

- ստորին՝ աշխատանքային թիմի անդամներ, ծառայողներ, սպասարկողներ և այլք, ովքեր պատրաստակամ կլինեն իրականացնելու աշխատանքային/մասնագիտական գործունեություն:

Այս մակարդակներում իրականացվող ***կոմպետենտ գործունեությունը*** ժամանակի պահանջով ուղեկցվելու է վերը նշված հոգեբանասոցիալական նախադրյալներով՝ հոգեկան առողջության ապահովում, հայրենասիրական գաղափարախոսության շեշտադրում և նորարարական տեխնոլոգիաների տիրապետում:

Մասնագիտական կարողությունների ձևավորման համար նախահիմք են անձի ֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական ցուցանիշները, անհատական և անձնային որակները: Սխեմատիկորեն ներկայացնենք կարողունակությունների ձևավորման նախադրյալները և մասնագիտական գործունեության արդյունքում դրսևորվող իրացումները (տե՛ս նկար 1):

Նկար 1

Կարողունակությունների ձևավորման նախահիմքերը



Վերը նշված ֆիզիոլոգիական և հոգեֆիզիոլոգիական նախադրյալները, ունենալով ժառանգական հիմք, ճկուն չեն, որն էլ դժվարացնում է մասնագիտական գործունեության ընթացքում նոր պահանջների և կարողունակությունների յուրացումը: Այդ իսկ պատճառով՝ ավելի նշանակալի են դառնում անհատական հոգեբանական և անձնային այն որակներն ու գծերը, որոնց ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում սոցիալական միջավայրը: Ներկայում անձի մասնագիտական գործունեու-

թյան մեջ առավել քան կարևորվում են հենց այդ որակները, մասնավորապես՝

- ինքնուրույն կողմնորոշվելը,
- որոշում կայացնելը,
- ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելը,
- սեփական նախաձեռնողություն ցուցաբերելը,
- սեփական ներուժով դժվարությունները հաղթահարել կարողանալը,
- տարբեր խնդրահարույց իրավիճակներում ռացիոնալ ելքեր փնտրելն ու գտնելը,
- նորարարական մոտեցումների, տեխնոլոգիաների տիրապետելը,

տեղեկատվությունը ըստ առաջնայնության վերլուծել կարողանալը և այլն...

Նկար 2

Մասնագետի հոգեբանասոցիալական կարողունակությունների եռամակարդակ մոդելի սխեմա



Ինչպես արդեն նշել ենք, մեր ուսումնասիրություններն ու հետազոտությունները ընդգրկելու են մասնագիտական հոգեբանասոցիալական կարողունակությունների մի քանի հիմնական ուղղություններ: Դրանցից են.

- COVID-19-ով պայմանավորված հոգեկան առողջության ապահովման առաջնայնությունը,
- հետպատերազմյան ճգնաժամով պայմանավորված հայրենասիրական բաղադրիչի գերակայությունը,
- ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը:

Հոգեբանասոցիալական տեսանկյունից կարևորվող այս ուղղություններն առավել նշանակալի են մարդ-մարդ բնագավառի մասնագիտություններում՝ բժիշկ, հոգեբան, ռազմագետ և մանկավարժ: Երկրում տիրող ճգնաժամային իրավիճակով պայմանավորված՝ կարծում ենք, որ նշված մասնագիտությունների համար առկա մասնագիտական կարողունակությունների վերաձևավորումը և համալրումը կհամապատասխանեն ժամանակի պահանջին և կապահովեն մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

ВАРДУИ ПАПОЯН, АЛИНА ГАЛСТЯН, ДИАНА САРГСЯН – *Преобразование профессиональных психосоциальных компетенций в кризисных ситуациях.* – Профессиональные компетенции в РА существующие, закрепленные образовательными программами, нуждаются в преобразовании и дополнении. Эта необходимость вызвана кризисными ситуациями, с которыми столкнулось человечество: ограничения, обусловленные COVID-19, послевоенные психолого-социальные последствия, насыщенные технологические требования для осуществления образовательного процесса и др. В статье представлено описание трехуровневой модели профессиональных психолого-социальных компетенций. Это поможет по-новому систематизировать путь становления специалиста от личностного роста до профессионализма. В модели представлены верхний, средний и нижний уровни. Верхний уровень включает исследовательские, организаторские, обучающие и технологические навыки. В среднем уровне представлены активность специалиста, направленность к делу, внешняя и внутренняя мотивация, в нижнем – эмоциональные, поведенческие и волевые качества. Нами проведен первичный мониторинг профессиональных психолого-социальных компетенций для профессий, востребованных в последние годы в нашей стране (в частности, врачи, психологи, педагоги, военные).

Ключевые слова: *кризис, профессиональная компетенция, личность, навык, трехуровневая модель, психолого-социальные качества*

VARDUHI PAPOYAN, ALINA GALSTYAN, DIANA SARGSYAN – *Transformation of Professional Psychosocial Competencies in Crisis Conditions.* – The existing professional competencies in the Republic of Armenia, fixed by educational programs, need to be transformed and supplemented. This need is caused by the crisis situations faced by humanity: the restrictions caused by COVID-19, the post-war psychological and social consequences, the saturated technological requirements for the educational process, etc. The article presents a description of a three-level model of professional psychological and social competencies. This will help to systematize the path of becoming a specialist from personal growth to professionalism in a new way. The model includes upper, middle and lower levels. The upper level includes research, organizational, teaching and technological skills. At the middle level, the activity of a specialist, focus on business, external and internal motivation is represented, at the lower level - emotional, behavioral and volitional qualities. We conducted a primary monitoring of professional psychological and social competencies for professions in demand in recent years in our country (in particular, doctors, psychologists, teachers, military).

Key words: *crisis; professional competence; persona, skill, three-tier model; psychosocial qualities*